ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/94

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թ. N 94

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ Շիրակի մարզ , ք. Արթիկ, Տոնականյան 33
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ. դեկտեմբերի 26-ին քննարկեց «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	13 ապրիլի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	22-25 մայիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	03 օգոստոսի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	26 սեպտեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԱՊՔ–ն իրականացնում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր: Իրականացվող կրթական ծրագրերի ուղղությունները բխում են տարածաշրջանի (Արթիկ քաղաքի և հարակից գյուղերի) կարիքներից:

Կրթական ծրագրերի համար հիմք են ծառայում պետական կրթական չափորոշիչները: Քոլեջը ՊԿՉ-ների տեղայնացման նպատակով, թույլատրելիի սահմաններում վերանայվել է ուսումնական պլանները: Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում աշխատաշուկայի և ոլորտային այլ ներկայացուցիչները հիմնականում ներգրավված չեն: Իրականացվող բարելավումները հիմնված չեն հավաքագրված օբյեկտիվ տվյալների վրա: Ուսումնառության արդյունք-դասավանդման և գնահատման մեթոդներ կապը երբեմն չեն նպաստում սահմանված արդյունքների ձեռքբերմանը: Ուսանողներին տրվող առաջադրանքները վերլուծական, ստեղծագործական մտածողություն զարգացնող չեն:

ԱՊՔ-ն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ: Ներդրված են դասախոսական կազմի երիտասարդացման մեխանիզմներ, վերջին տարիներին ներգրավվել են աշխատաշուկայից պրակտիկ մասնագետներ՝ ժամավճարային կամ համատեղող:

Դասախոսական անձնակազմի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով: Քոլեջում դասախոսական կազմի կատարելագործման նպատակով կազմակերպվում են

վերապատրաստումներ: Սկսնակ դասախոսներին աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվում են մենթորության աշխատանքներ:
ԱՊՔ-ն կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածք, վերջին տարիներին իրականացվել են բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ: Ունի համապատասխան շենք, մասնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ, լսարաններ, կահավորանք, որոնք բավարարում են նվազագույն պահանջներին: Քոլեջի միջավայրն ընդհանուր առմամբ անվտանգ է և որոշակիորեն հարմարեցված է հատուկ կարիք ունեցողների համար:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Քոլեջը տարածաշրջանում ունի կրթական և սոցիալական ռազմավարական կարևոր նշանակություն: Իրականացվող մասնագիտությունները սպասարկում են տարածաշրջանի կարիքները: Սահմանված է քոլեջի առաքելությունը, որը կիսում են ներքին և արտաքին շահակիցները:
Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի հիմնարար սկզբունքները և արժեքները, հիմնախնդիրները, զարգացման նպատակները: ԶԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են անհրաժեշտ քայլերը, սակայն հստակեցված չեն ժամկետները, նախանշված չեն արդյունքների գնահատման ցուցիչները:
Երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները փոխկապակցված չեն:
Քոլեջում կանոնակարգված չեն որոշումների կայացման գործընթացները, որոշումների կայացումը հիմնված չէ վերլուծված տվյալների վրա, դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որոշումների կայացմանը պասիվ է: Առկա են անհամապատասխանություններ կիրառվող փաստաթղթերի և իրականում ընթացող գործընթացների միջև:
Որակի ներքին ապահովման աշխատանքները մեկնարկել են 2021թ-ից, «Որակի ներքին ապահովման քաղաքականություն» փաստաթուղթը մշակվել է 2023թ. փետրվարին, որտեղ ներկայացված են համակարգի նպատակները և խնդիրները, բոլոր գործընթացների հիմքում ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը և այլն: Քոլեջում իրականցվող գործընթացները դեռևս պլանավորման և իրականացման փուլում են, իսկ գնահատման գործիքները հաճախ բացակայում են: Ամբողջությամբ չի գործում ՊԻԳԲ շրջափուլը, որակի ապահովման մեխանիզմները չեն նպաստում կառավարման և վարչարարության բարելավմանը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

Քոլեջում գործում է ուսանողների հավաքագրման կանոնակարգված գործընթաց, գրանցվել է ընդունելության աճ, ուսանողների կարիքների վերհանման նպատակով ներդրված է կուրսղեկների ինստիտուտը: Առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, վերջին տարում

նկատելի է իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսային աճ: Գործում է Ուսանողական խորհուրդ, որը նպաստում է ուսանողական միջավայրի ձևավորմանը:
Թեև ԱՊՔ-ում իրականացվում են հետազոտական բնույթի որոշ աշխատանքներ, հետազոտությունը քոլեջի համար առաջնահերթություն չի դիտարկվում, առկա չէ հետազոտական աշխատանք իրականացնելու հստակ քաղաքականություն: Ուսանողների կողմից իրականացված աշխատանքներում բացակայում է վերլուծական մասը և ինքնուրույնությունը, դասախոսական կազմը հիմնականում չի իրականացնում հետազոտական աշխատանքներ:
Դրական է, որ որոշ դասախոսների կողմից ուսանողներին ներկայացվում են վերլուծություններ ենթադրող հանձնարարականներ, սակայն դրանք ինստիտուցիոնալ հիմքի վրա դրված չեն: Թույլ է հետազոտական գործունեության և ուսումնառության միջև կապ: Ներդրված չեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու խրախուսման հստակ մեխանիզմներ:

ԱՊՔ-ն ունի արտաքին և ներքին հաշվետվողականության որոշակիորեն ձևավորված համակարգ: Ձեռնամուխ է եղել պաշտոնական կայքէջի մշակմանը և թողարկմանը, քոլեջի գործունեությունը լուսաբանվում է նաև սոցիալական հարթակներով: Առկա են հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ և պատասխանատուներ:
ԱՊՔ-ն տարածաշրջանում ունի ակտիվ համագործակցություն գործատուների հետ, որը նպաստել է Աշխատանքի վրա հիմնված ուսուցման /ԱՀՈՒ/ ձևաչափով կրթական ծրագրի ներդրմանը, ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը: Վերջին տարիներին ակտիվացել է կապը ՀԿ-ների հետ, որի արդյունքում բարելավվել է քոլեջի ռեսուրսային բազան և ուսումնական միջավայրը, ինչպես նաև կազմակերպվել են կարճաժամկետ ծրագրեր:
Քոլեջը հետաքրքրված է միջազգային ծրագրերին մասնակցության հարցում, այնուամենայնիվ դեռևս շոշափելի արդյունքներ նկատելի չեն:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - զարգացման ծրագրի գնահատման գործուն մեխանիզմների ներդրմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքների և աշխատանքների ներդրմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - գրադարանը մասնագիտական, արդիական և թվայնացված գրականությամբ համալրելու անհրաժեշտությանը,
   - լրացուցիչ պարապմունքների ներդրման անհրաժեշտությանը, հաշվի առնելով վեր հանված կարիքները,
   - դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմների ներդրմանը,
   - որակի մշակույթի շարունակական զարգացմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. դեկտեմբերի 26
ք.Երևան